ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկտեմբերի 2013 թվականի N 704-Ա

ք. Հրազդան

1998 ԹՎԱԿԱՆԻՆ ԾՆՎԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻՆ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ԿՑԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Զինապարտության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի դրույթների, 1998 թվականին ծնված պատանիների և ավագ տարիքի անձանց զորակոչային տեղամասերում կցագրման աշխատանքներ կազմակերպելու և անցկացնելու համար՝ ***որոշում եմ.***

1. 1998 թվականին ծնված պատանիների և ավագ տարիքի անձանց կցագրումը զորակոչային տեղամասում անցկացնել 2014 թվականի ընթացքում:

2. Կցագրում անցկացնել Չարենցավանի տարածքային զինվորական կոմիսարիատում:

3. Կցագրում անցկացնելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Հանձնաժողովի նախագահ՝ Չարենցավանի զինվորական կոմիսար, մայոր Վ. Վիրաբյան,

2) Հանձնաժողովի անդամներ՝ բժիշկ մասնագետներ՝

ա. թերապևտ	Է. Մսխչյան,
բ. վիրաբույժ	Վ. Պողոսյան,
գ. ակնաբույժ	Ա.Երիցյան,
դ. քիթ-կոկորդ-ականջ	Հ.Աֆյան,
ե. նյարդաբան	Հ. Նազինյան,
զ. սրտաբան	Ս.Հովհաննիսյան,
է. հոգեբույժ	Ա. Չիլինգարյան,
ը. մաշկավեներաբան	Կ.Բաղալյան,
թ. բուժքույր	Ռ. Ամիրխանյան:

4. Բժշկական քննություններ անցկացնող մասնագետների վարձատրությունը կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի ապրիլի 19-ի N 483-Ն որոշման 1-ին կետի պահանջների համաձայն:

5. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բժշկական կենտրոններում նախազորակոչային և զորակոչային տարիքի արական սեռի քաղաքացիների բժշկական փորձաքննություններն իրականացնել համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 10-ի N 748-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման 3-րդ կետի դրույթների:

6. <<Չարենցավանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Գ. Սահակյանին՝

1) ժամանակին կազմակերպել այն պատանիների բուժումը, որոնք հանձնաժողովի կողմից ուղարկվել են բուժման,

2) ապահովել հանձնաժողովին անհրաժեշտ գույքով, սարքավորումներով և դեղորայքով:

7. Կցագրումն անցկացնող հանձնաժողովի նախագահին՝ կցագրման ավարտից հետո վերլուծել [illegible]ողոր հիվանդ ճանաչված պատանիների հիվանդության պատճառները, սահմանել խիստ հսկողություն ժամանակին բուժման ենթարկելու համար:

8. Առաջարկել համայնքների ղեկավարներին, հանձնարարել ուսումնական հաստատությունների տնօրեններին՝ համաձայն զինվորական կոմիսարիատի ժամանակացույցի, ապահովել պատանիների պարտադիր ներկայությունը զինվորական կոմիսարիատ:

9. Սույն որոշմամբ սահմանված աշխատանքների կազմակերպումը և կատարումը դնել Չարենցավանի զինվորական կոմիսար, մայոր Վ. Վիրաբյանի վրա:

10. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ս.Հակոբյանի վրա:

11. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ